ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«17» Մարտի 2026թ. N 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 30-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի մարտի 9-ի N INS024-26 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 10-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 30-Ա հրամանի հավելվածը լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

4	Մարտի 30-ապրիլի 30	18.30 -ից 21.30	«Մեքենամեխանիզմների տեղակայման և շահագործման պահանջները շինհրապարակներում»	Գեորգի Կակոյան	«Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5	1-ին կարգի մասնագետին շնորհվելու է 20 կրեդիտ, 2-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 15 կերդիտ, 3-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 10 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-25, 31-32 մասնագիտություններ	1-ին կարգի մասնագետ՝ 80.000 2-րդ կարգի մասնագետ՝ 60.000 3-րդ կարգի մասնագետ՝ 40.000

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3/17/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ